ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հատիս համայնք, 5-րդ փող./2 , E-mail *hatis.kotayq@mta.gov.am*

09 հունիս 2017թ.

____ N 30

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հարգելի պարոն Պետրոսյան

Ձեզ ենք ներկայացնում Հատիս համայնքի ղեկավարի կողմից ընդունված որոշումները 2017 թվականի հունվարի 9-ից առ այսօր:

Առդիր 7 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Ս. Գարսևանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հատիս համայնք, 5-րդ փող./2 , E-mail *hatis.kotayq@mta.gov.am*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունվար 2017 թվականի N 1

## ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝

***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ***

1. 2017 թվականի փետրվարի 08-ին ժամը 11-ին հայտարարել մրցույթ Հատիս համայնքի համայնքապետարանի հետևյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար Կոտայքի մարզի Հատիս համայնքի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-1):
2. Մրցութային հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկման լիազորությունները և նախապատրաստական աշխատանքների իրականացման պատասխանատվությունը դրվում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:
3. Սույն որոշումը ուժի մեջ է ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Գարսևանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հատիս համայնք, 5-րդ փող./2 , E-mail *hatis.kotayq@mta.gov.am*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունվար 2017 թվականի N 2

## ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 09 ՀՈՒՆՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ N1 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով՝

***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ***

Ուժը կորցրած ճանաչել Հատիս համայնքի ղեկավարի 09 հունվարի 2017 թվականի N 1 որոշումը:

Համայնքի ղեկավար՝ Ս. Գարսևանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հատիս համայնք, 5-րդ փող./2 , E-mail *hatis.kotayq@mta.gov.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունվար 2017 թվականի N 3

## ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝

***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ***

1. 2017 թվականի փետրվարի 16-ին ժամը 11-ին հայտարարել մրցույթ Հատիս համայնքի համայնքապետարանի հետևյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար Կոտայքի մարզի Հատիս համայնքի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-1):
2. Մրցութային հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկման լիազորությունները և նախապատրաստական աշխատանքների իրականացման պատասխանատվությունը դրվում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

3. Սույն որոշումը ուժի մեջ է ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ս. Գարսևանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հատիս համայնք, 5-րդ փող./2 , E-mail hatis.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«7» փետրվարի 2017 թվականի N 4-Ա

## ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով,

***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ***

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ին կայանալիք հերթական ընտրությունների անկացման համար համայնքում սահմանել հետևյալ տեղամասային կենտրոնը.

1) Կոտայքի մարզի Հատիս գյուղական համայնքի Վ. Վարդանյանի անվան միջն. դպրոցի շենքը՝ 1-ին փողոց թիվ 1 հասցե:

2. Հանձնարարել աշխատակազմի քարտուղար Օհան Սահակյանին, գործող կարգի համաձայն տեղամասային կենտրոնի գտնվելու վայրի մասին իրազեկել լիազոր մարմնին, տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

Համայնքի ղեկավար Ս. Գարսևանյան

2017 թ. փետրվարի 7

գ. Հատիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հատիս համայնք, 5-րդ փող./2 , E-mail hatis.kotayq@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ**
**22 մարտ 2017 թվականի N 5-Ա**

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2017 թվականի փետրվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տարածքում 2017 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանի հաստատման մասին» N 31-Ա որոշումը,

***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ***

Հատիս համայնքի տարածքում 2017 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով.

1. Հաստատել Հատիս համայնքի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն N1 հավելվածի.
2. Մինչև 2017 թվականի մարտի 28-ը Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել.
   1) Համապատասխան միջոցառումների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի.
   2) Տեղեկություններ համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման վերաբերյալ՝ համաձայն N 2 հավելվածի.
   3) Առաջարկություններ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն N 3 հավելվածի.
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի աշխատակազմի քարտուղար Օհան Սահակյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԳԱՐՍԵՎԱՆՅԱՆ

22 մարտ 2017թ.

գ. Հատիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հատիս համայնք, 5-րդ փող./2 , E-mail hatis.kotayq@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ**
**08 հունիս 2017 թվականի N 6-Ա**

*ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 31/12/1998թ. թիվ 867 որոշման պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Սիսակ Անդրանիկի Դանիելյանի դիմումը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 05/04/2017թ. Գործ թիվ ԵԿԴ/3866/02/16 վճիռը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված հողամասերը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասում և ինքնակամ կառույցը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի սահմանածակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝* ***որոշում եմ***

*1. Ճանաչել Սիսակ Անդրանիկի Դանիելյանի սեփականության իրավունքը Հատիս համայնքում հատկացված 0308-0037 կադաստրային ծածկագրերով 0.3հա ընդհանուր հողամասերից թաստացի ավել օգտագործվող մինչև 20% 0.0140հա հողամասերի նկատմամբ նրա սեփականության իրավունքը:*

*2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԳԱՐՍԵՎԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հատիս համայնք, 5-րդ փող./2 , E-mail *hatis.kotayq@mta.gov.am*

**ՈՐՈՇՈՒՄ**
**08 հունիս 2017 թվականի N 7-Ա**

***ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 31/12/1998թ. թիվ 867 որոշման պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Սիսակ Անդրանիկի Դանիելյանի դիմումը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 05/04/2017թ. Գործ թիվ ԵԿԴ/3866/02/16 վճիռը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված հողամասերը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասում և ինքնակամ կառույցը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝* ***որոշում եմ***

*1. Ճանաչել Սիսակ Անդրանիկի Դանիելյանի սեփականության իրավունքը Հատիս համայնքում հատկացված 0308-0043 կադաստրային ծածկագրերով 0.19հա ընդհանուր հողամասերից թասպացի ավել օգտագործվող մինչև 20% 0.0355հա հողամասերի նկատմամբ նրա սեփականության իրավունքը:*

*2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԳԱՐՍԵՎԱՆՅԱՆ